# ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ Մ.Գ.ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ս.Ս.ՍՏԵՓԱՆՅԱՆ

*Ակադեմիկոս Մկրտիչ Գեղամի Ներսիսյանի պատմագիտական գործունեության մեջ կարևոր տեղ են գրավում Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը:*

*Այդ ասպարեզում նրա աշխատություններից առավել նշանավորը «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850 - 1870թթ.» մեծածավալ մենագրությունն է, որը որպես դոկտորական դիսերտացիա պաշտպանեց 1946թ.: Այն հրապարակվեց միայն 1955թ.: Դա պատմագիտության մեջ նոր խոսք էր սուլթանական Թուրքիայի լծի տակ տառապող հայ ժողովրդի ծանր վիճակի, նրա անհավասար, սակայն հերոսական պայքարի մասին: Նա համակողմանիորեն հիմնավորել է այն հայեցակետը, որ արևմտահայության ազգային-ազատագրական պայքարը, ապստամբությունները ունեցել են գերազանցապես ինքնապաշտպանական բնույթ, գոյատևման նպատակ: Վճռականորեն ժխտելով հակապատմագիտական տեսակետները՝ նա բացահայտել է հայ ազատագրական պայքարի ինչպես ազգային, այնպես էլ սոցիալ-դասակարգային բովանդակությունը, շարժիչ ուժերը, եվրոպական մեծ տերությունների շահամոլ քաղաքականությունը: Հեղինակը ճշմարտացիորեն լուսաբանել է հայ ժողովրդի պատմության այդ ժամանակաշրջանի մի շարք հանգուցային խնդիրները, մասնավորապես Ռ.Պատկանյանի, Ռաֆֆու, Գ.Արծրունու, Գ.Սրվանձտյանի և այլ նշանավոր գործիչների առաջադիմական գաղափարների օբյեկտիվ գնահատման հետ կապված հարցերը:*

*Անվարան կարելի է ասել, որ այդ աշխատությամբ դրվեց Հայկական հարցի, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի գիտական ուսումնասիրության սկիզբը: Այդ մեծարժեք մենագրության սկզբում կոնկրետ ու հավաստի աղբյուրներով բնութագրվում է Հայկական հարցի նախապատմությունը: Գիտնականը ցույց է տալիս, որ թուրք-օսմանյան ռազմաֆեոդալական պետությունը բազմաթիվ զավթողական պատերազմներ է մղում և նվաճում մի շարք երկրներ: «Գրաված բոլոր երկրներում օսմանյան սուլթանները, - գրում է նա, - հաստատում էին կամայականության ու բռնության, բացարձակ ստրկացման և անլուր ճնշումների ռեժիմ» [1]:*

*Մ.Ներսիսյանի պատմագիտական հայեցակետում կարևորվում է այն իրողությունը, որ հայ ժողովրդի պատմության մեջ բախտորոշ իրադարձություն տեղի ունեցավ XIXդ. սկզբին: Ռուս-պարսկական պատերազմների հետևանքով, Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերով գրեթե ամբողջ Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսաստանին, որով էլ արևելահայությունը ոչ միայն ազատվեց ֆիզիկական բնաջնջման սպառնալիքներից ու բռնի ձուլումից, այլև Արևելյան Հայաստանը բնակչության ազգային կազմով դարձավ իսկապես հայկական: Դրանով նոր էջ բացվեց հայ ժողովրդի*

---

[1] *Մ.Գ.Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850 - 1870թթ. Ե., 1955, էջ 10:*

պատմության, հայ և ռուս ժողովուրդների բարեկամության ու համագործակցության մեջ: Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին լիովին հաստատեց անդրկովկասյան-մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանում հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման ճշմարտացիությունը, կենսունակությունը երկու ժողովուրդների համար: Դրանից հետո հայ ժողովրդի առջև ծառացավ նոր հիմնախնդիր՝ թուրքական բռնակալությունից Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցը:

Պատմական ասպարեզ մտավ Հայկական հարցը, որի իմաստը միայն ու միայն Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդիրն էր: Հայոց պատմության այդ հիմնահարցը կառուցվում էր այն ճշմարտության վրա, որ եթե Արևելյան Հայաստանը չմիանար Ռուսաստանին, ապա արևելահայությունը կարժանանար արևմտահայության ողբերգական ճակատագրին:

Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդրի՝ Հայկական հարցի, բնորոշումները բազմազան են, գոյություն ունեցող հասկացողությունները տարբեր տեսանկյուններ ունեն, իսկ դրանց հեղինակները շատ են: Սփյուռքում և Հայաստանում տարածված է Հայ դատ հասկացությունը: Հայկական հարցը հակիրճ ու դիպուկ է բնութագրել գերմանացի մեծ մարդասեր, հայ ժողովրդի ազնիվ բարեկամ, Հայկական հարցի փայլուն գիտակ Յո.Լեփսիուսը: Նա ասել է. «Հայկական հարցը տնաբույս թուփ չէ, այլ եվրոպական դիվանագիտության պտուղն է... Դիվանագիտական շախմատային խաղի մեջ հաչը կատարում է զինվորի դեր, որին երբեմն առաջ էին մղում կամ զոհաբերում: Մարդասիրական ու «քրիստոնյաների հովանավորության» մասին խոստումները պատրվակներ էին միայն»[2]:

Հայկական հարցը բնութագրելով որպես ազգային խնդիր՝ Մ.Ներսիսյանը ցույց տվեց, որ հենց այդ տեսանկյունից արևմտահայ և արևելահայ իրականության մեջ կային զգալի տարբերություններ: Միանգամայն տրամաբանորեն հաստատեց, օրինակ, որ XIXդ. երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանում ծավալված շարժումը ազգային-ազատագրական բնույթ ուներ, իսկ Արևելյան Հայաստանում տեղի էին ունենում սոցիալ-դասակարգային բնույթի գյուղացիական շարժումներ: Միաժամանակ, Մ.Ներսիսյանը մատնանշեց, որ «չպետք է անել այն եզրակացությունը, թե Արևելյան Հայաստանում բացակայում էին ազգային բնույթի շարժումներ, հակացարական ելույթներ ու ըմբոստություններ, իսկ Արևմտյան Հայաստանում ամեն ինչ սպառվում էր ազգային-ազատագրական բնույթի պայքարով»[3]:

Հայկական հարցի լուծման, Արևմտյան Հայաստանի ազատագրման գործում Մ.Ներսիսյանը կարևոր նշանակություն էր տալիս 1877 - 1878թթ. ռուս-թուրքական պատերազմին, դրա արդյունքներին: Նա միանգամայն իրավացի նշում էր, որ սուլթանական բռնապետության լծից ազատվել ձգտող արևմտահայ բնակչությունը մեծ հույսեր էր կապում ռուսական բանակի հաղթանակի հետ, ռուս զինվորներին դիտում էր որպես ազատարարներ ու փրկարարներ: «Արևմտահայ ժողովուրդը, ինչպես արդեն

---

[2] Der Prozeß Taiaat Pascha. Stenographischer Bericht über die Verhandiung gegen den des Mordes an Talaat angeklagten armenischen Studenden Solomon Tehlirian vor dem Schwurgericht des Landgerichts III zu Berlin, Aktenzeichen: C.J. 22/21 am 2. Und 3. Juni 1921.

Mit einem Vorwort won Armin T.Wegner und einem Anhang. Berlin, 1921. S. 59.

[3] Մ.Գ.Ներսիսյան, նշվ. աշխ., էջ 99:

նկատել ենք, իր ազատագրությունը սուլթանական լծից չէր պատկերացնում առանց Ռուսաստանի օգնության»[4], - գրել է Մ.Ներսիսյանը:

Հայկական հարցի լուծման հայեցակետում, այսինքն՝ Արևմտյան Հայաստանի ազատագրման համար գոյություն ուներ կոնկրետ դաղափարախոսություն: Դրա ականավոր ներկայացուցիչներն էին Խաչատուր Աբովյանը և Միքայել Նալբանդյանը: Պատմաբանը բարձր էր գնահատում Միքայել Նալբանդյանի դաղափարական ու քաղաքական դիրքորոշումը: Նա նշել է, որ հայ ականավոր հեղափոխականն իրեն հատուկ վճռականությամբ ու համարձակությամբ այն միտքն էր քարոզում, թե հարկավոր է հեղափոխական պայքարի, ազատագրական շարժման միջոցով տապալել օտարի լուծը և ազատել հայրենիքն ու ժողովուրդը ազգային ճնշումներից, հարստահարություններից և սոցիալ-տնտեսական կեղեքումներից[5]:

Մ.Ներսիսյանի աչքից չի վրիպել Հայկական հարցի, արևմտահայության ազատագրության խնդիրների մասին գրող ոչ մի լուրջ հեղինակ: Այսպես, վերոհիշյալ գրքում նա կարևորում է Հակոբ Պարոնյանի՝ բռնատիրական Թուրքիային և եվրոպական պետությունների նվաճողական քաղաքականությանը առնչվող մերկացումները՝ մեջբերելով ականավոր երգիծաբանի այն միտքը, որ նրանք միայն դժբախտություն են բերել հայ և մյուս ժողովուրդներին[6]:

Հայկական հարցին, Արևմտյան Հայաստանն ազատագրելու խնդրին առնչվող մասերում Մ.Ներսիսյանը կարևոր տեղ է հատկացնում Մկրտիչ Պեշիկթաշլյանի, Ռափայել Պատկանյանի, Բաֆֆու առաջ քաշած մտքերին:

Գրքում համակողմանի լուսաբանված է արևմտյան տերությունների դիրքորոշումը Հայկական հարցում և արևմտահայության ազգային-ազատագրական շարժման նկատմամբ: Խարազանելով անգլիական կառավարության թշնամական վերաբերմունքը հայ ժողովրդի ազատագրական շարժման նկատմամբ՝ Մ.Ներսիսյանը, որպես բնորոշ օրինակ, ներկայացնում է Զեյթունի 1862թ. ապստամբությունը: Նա նշում է, որ Կոստանդնուպոլսում անգլիական դեսպան Հենրի Բուլվերը բացահայտ թշնամական դիրք է գրավել Զեյթունի ապստամբների նկատմամբ: Անգլիացի դիվանագետը ավազակներ էր համարում ազգային ազատագրության համար պայքարող աննկուն զեյթունցիներին: Ավելին, անգլիական դեսպանն իր պաշտպանության տակ էր վերցրել թուրքական ջարդարար Ազիզ փաշային և արդարացնում էր նրա բարբարոսական գործողությունները: Հավաստի աղբյուրների հիման վրա Մ.Ներսիսյանը նշում է, որ «Թուրքական կառավարության հայահալած քաղաքականության ամբողջ պատասխանատվությունն ընկնում է անգլիական կառավարության վրա, որովհետև նա է հովանավորում սուլթանին՝ հայ ազատագրական շարժումները ճնշելու գործում»[7]:

Բնութագրելով Ֆրանսիայի կառավարողների վարքագիծը Զեյթունի ապստամբության նկատմամբ՝ Մ.Ներսիսյանը այն հետևությունն է արել, որ Նապոլեոն III-ի կառավարությունը ձգտում էր կաթոլիկ կղերականների

---

[4] Նույն տեղում, էջ 358:
[5] Նույն տեղում, էջ 126 - 127:
[6] Նույն տեղում, էջ 224 - 225:
[7] Նույն տեղում, էջ 317:

միջոցով հայ ժողովրդի մեջ մեռցնել սպատասիրության ոգին և ամբողջ Կիլիկիան դարձնել իր գաղութը :

Արևմտյան տերությունների, մասնավորապես Անգլիայի և Ֆրանսիայի հակահայկական քաղաքականությունը շարունակվեց նաև հետագա տարիներին: Մ.Ներսիսյանը գրում է, որ, երբ 1877 - 1878թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ հայ ժողովուրդը փորձեց ռուսական զենքի օգնությամբ ազատագրվել սուլթանական Թուրքիայի բռնակալությունից, Անգլիան դիմեց խորամանկ ու նենգ քայլի: 1878թ. հունիսի 4-ին Կոստանդնուպոլսում ստորագրվեց Կիպրոսի համաձայնագիրը: Անգլո-Թուրքական հակահայկական ու հակառուսական այդ փաստաթղթով Անգլիային էր անցնում այն ժամանակ թուրքական տիրապետության տակ գտնվող Կիպրոս կղզին, իսկ դրա փոխարեն Անգլիան պարտավորվում էր բոլոր միջոցներով թույլ չտալ Արևմտյան Հայաստանի անջատումը Օսմանյան կայսրությունից: Դրանով, փաստորեն, անգլիական դիվանագիտությունը հասավ այն բանին, որ Արևմտյան Հայաստանը մնաց թուրքական տիրապետության տակ: Դրանով էլ չբավարարվեց անգլիական դիվանագիտությունը: Նրա ջանքերով Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված Սան-Ստեֆանոյի նախնական պայմանագիրը փոխարինվեց Բեռլինի դաշնագրով, որի 61-րդ հոդվածը կատարյալ չարիք դարձավ արևմտահայության համար:

Հայկական հարցի սրդարացի լուծումը արգելակելուն, Արևմտյան Հայաստանը թուրքական բռնակալությունից ազատագրելու խնդիրը խափանելուն էր նպատակամղված անգլիական քաղաքականությունը հետագա բոլոր տարիներին: Մ.Ներսիսյանը մատնանշել է, որ 1895 - 1896թթ. հայկական զանգվածային կոտորածների ժամանակ Անգլիայի կառավարող շրջանների առանձին ներկայացուցիչներ կոկորդիլոսի արցունքներ էին թափում, «համակրական ճառեր էին արտասանում հայ ժողովրդի մասին, իսկ իրականում հրահրում էին սուլթան Աբդուլ Համիդի ջարդարարներին՝ հայերի դեմ» [8]: Որպես օրինակ, նա բերում է Վանի անգլիական հյուպատոսի հանցավոր քայլերը: «Վանի անգլիական հյուպատոսը, - նշված է գրքում, - ղեկավարում, ամեն կերպ օգնում էր թուրքական ջարդարարներին և միանալով նրանց, թնդանոթից կրակում էր ինքնապաշտպանության դիմած Վանի հայ բնակչության վրա» [9]:

Հայկական հարցում արևմտահայության ազատագրության նկատմամբ անգլիական կառավարության ու դիվանագիտության դիրքորոշումը թունոտ սատիրայով մերկացրել է Գր.Արծրունին: Նա դիպուկ գրել է. «Անգլիան ներկայացնում է եսական քաղաքականության տիպը: Արևմտյան Եվրոպան՝ սկսած խաչակիր պատերազմներից, միշտ ծառայեցրել է իր օգուտներին արևելյան ազգերը... Այժմ երբ հայերը կարոտ են Եվրոպայի օգնությանը, ոչ մի եվրոպական պետություն չի օգնի նրանց: Միակ պետությունը, որի վրա հայերը կարող են հույս դնել - այդ Ռուսաստանն է: Արևմտյան Եվրոպան ընդհակառակն գուցե և կուզենար, որ մենք ամենքս

[8] Նույն տեղում, էջ 317 -318:
[9] Նույն տեղում, էջ 319:
[10] Նույն տեղում:

կոտորվենք, որ մեր տեղը իրանց եվրոպական գաղթականությունները բնակեցնեն»[11]:

Մ.Ներսիսյանը բազմաթիվ փաստերով բացահայտել է նաև Ֆրանսիայի հանցավոր քաղաքականությունը Հայկական Հարցում: Նա նշել է, որ 1894 - 1896թթ. Հայկական կոտորածների ժամանակ ֆրանսիական կառավարությունը ոչ միայն չդատապարտեց սուլթանական Թուրքիայի հայաջինջ քաղաքականությունն ու գործողությունները, այլև «իր «նեյտրալ-լռելյայն» դիրքով փաստորեն պաշտպան կանգնեց ջարդարար սուլթան Աբդուլ Համիդին»[12]:

Թուրքական բռնապետությունից Արևմտյան Հայաստանի ազատագրման և Հայկական հարցը արդարացի լուծելու գործին թշնամական վերաբերմունք ունեին ԱՄՆ-ի կառավարող շրջանները: Ամենից առաջ նրանք էին սուլթանական Թուրքիային զենք ու զինամթերք մատակարարում: Հայկական հարցի լուծումը նրանց համար ոչ միայն նպատակային խնդիր չէր, այլ միայն միջոց էր զավթողական-գաղութային նպատակներ իրագործելու:

Ընութագրելով 1890-ական թվականներին հայկական կոտորածների նկատմամբ ԱՄՆ-ի վարքագիծը՝ Մ.Ներսիսյանը գրում է, որ, երբ 1894թ. թուրքական իշխանությունները միայն Սասունում 10.000 հայ կոտորեցին, ամերիկյան կառավարությունը «սկսեց խոսել Հայկական հարցի մասին, «բողոքեց» հայկական կոտորածների դեմ և այլն: Սուլթան Աբդուլ Համիդը հասկացավ Միացյալ Նահանգների իսկական նպատակը (Թուրքիա ներմուծվող ամերիկյան ապրանքների մաքսի հարցերը - Ս.Ստեփանյան) և շուտով զիջումներ կատարեց վեճի առարկա դարձած հարցերում: Ամերիկյան կառավարությունը անմիջապես «մոռացավ» Հայկական հարցը և վերականգնեց սիրալիր հարաբերությունները Թուրքիայի հետ»[13]: Այնուհետև, Մ.Ներսիսյանը ցույց է տալիս, որ, «երբ մեկ տարի անց, 1895թվականին տեղի ունեցան նոր, ավելի զանգվածային և ընդհանուր կոտորածներ, ապա Ամերիկան չասաց և ոչ մի խոսք, նա անդամ չմտածեց որևէ «բողոքի» մասին: Ավելին: Պետական դեպարտամենտի քարտուղար Օնլեյը հանդես եկավ ջարդարար սուլթանի պաշտպանի դերում, հայտարարելով, թե «Հայկական կոտորածների մասին եղած լուրերը չափազանցված են և ճիշտ չեն»[14]:

Մ.Ներսիսյանը համակողմանիորեն հիմնավորել է կայզերական Գերմանիայի մեղսակցությունը Հայկական հարցի արդարացի լուծումը խափանելու գործում, ինչպես նաև նրա թշնամական վերաբերմունքը հայ ազգային-ազատագրական շարժման նկատմամբ: Իր ուսումնասիրություններում Մ.Ներսիսյանը հարուստ սկզբնաղբյուրներով ու փաստաթղթերով համակողմանիորեն հաստատել է հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը: Նա ցույց է տվել, որ այդ ճշմարտացի կողմնորոշումը ձևավորվել է դարերի ընթացքում և կարևոր գործոն է եղել Հայկական հարցի լուծման խնդրում:

---

[11] Մշակ, 1876, № 44, Մ.Գ.Ներսիսյան, նշվ. աշխ., էջ 322:
[12] Մ.Գ.Ներսիսյան, նշվ. աշխ., էջ 322:
[13] Նույն տեղում, էջ 329:
[14] Նույն տեղում, էջ 329 - 330:

Հայկական հարցի համակողմանի ու գիտական լուսաբանման ասպարեզում Մ.Ներսիսյանի գործունեության վերջին ժամանակահատվածում հրապարակվեց «Պատմության կեղծարարները» արժեքավոր աշխատությունը: Պատմության կեղծարարների դեմ ուղղված այդ գործը հանրագումարի է բերում մեծավաստակ պատմաբանի վերջին տարիներին հրատարակված կարևոր աշխատություններն ու հաղորդումները և նոր, լուրջ ավանդ է պատմագիտության մեջ:

Ամենից առաջ հարկ է ասել, որ գրքում զետեղված հոդվածներում և հաղորդումներում հեղինակը գեթ մազաչափ չի հրաժարվել հայ ազատագրական շարժման, Հայկական հարցի, հայոց ցեղասպանության, հայ-ռուսական հարաբերությունների վերաբերյալ իր տեսակետներից: Ավելին, նա արխիվային և զանազան նոր փաստաթղթերի ու նյութերի հիման վրա առավել համոզիչ բացահայտել, մերկացրել է պատմության հին ու նոր թուրքական կեղծարարներին և նրանց հետևորդներին:

Գիրքն սկսվում է «Օսմանյան պետության «քաղաքակրթական միսիայի» մասին» հոդվածով: Հավաստի աղբյուրների, անվիճելի փաստաթղթերի հիման վրա հեղինակը քարը քարի վրա չի թողել պատմության թուրք կեղծարարների կողմից ստեղծված այն առասպելից, որով զուր ճիգեր են գործադրված ապացուցելու, թե իբր «օսմանական պետությունը եղել է աշխարհի ամենազարգացած և առաջադեմ պետություններից մեկը, որ թուրք սուլթանները քաղաքակրթություն են սերմանել ու տարածել ... շատ երկրներում, ազատություն, օրինականություն են պարգևել բազմաթիվ ժողովուրդների, կարգ ու կանոն են հաստատել նրանց երկրներում: Ինչպիսի կեղծիք ու բացահայտ սուտ»[15]: Ի հեճուկս պատմության կեղծարարների, հեղինակը մեջբերում է կատարում անգլիացի հայտնի քաղաքական գործիչ Վիլյամ Գլադստոնից այն մասին, որ օսմանցիները «ամենուր, որտեղ որ հայտնվել են՝ իրենց հետևից թողել են խորը արյունոտ հետք, և նրանց տիրապետության ողջ տարածքում վերացել է քաղաքակրթությունը»[16]:

Բազմաթիվ հավաստի աղբյուրների հիման վրա Մ.Ներսիսյանը ցույց է տալիս, որ օսմանյան պետությունը հպատակ երկրներում վարում էր բացարձակ բռնության, կամայականության, ստրկացման և անլուր ճնշումների քաղաքականություն: «Այդօրինակ քաղաքականություն կիրառվում էր նաև Օսմանյան կայսրության մի մասը կազմող Արևմտյան Հայաստանում, – գրում է նա, – ուր 16-րդ դարում երկարատև ու ավերիչ արշավանքներից հետո իրենց տիրապետությունը հաստատեցին թուրքական սուլթանները»[17]:

Ակադեմիկոսը համակողմանիորեն լուսաբանել է նաև XIXդ. երկրորդ կեսի՝ արևմտահայ ազատագրական շարժման հիմնական հարցերը: Հայտնի է, որ ժողովրդական ապստամբություններ, ինքնապաշտպանական կռիվներ և այլ կարգի զանգվածային ընդվզումներ տեղի ունեցան Զեյթունում 1862, 1878 և 1895թթ., Մշո և Զարսանջակի գավառներում 1863 և 1865թթ. Վասպուրականում 1880-ական թվականներին. Սասունում 1894թ. և այլ վայրերում: Դրանք բոլորն էլ թուրքական իշխանությունների, բեյերի ու

---

[15] Մ.Գ.Ներսիսյան, Պատմության կեղծարարները (Հոդվածներ և հրապարակումներ), Ե., 1998, էջ 11:

[16] Նույն տեղում (ընդգծումը Վ. Գլադստոնինն է):

[17] Նույն տեղում, էջ 70:

չեխերի անօրինակ բռնությունների ու հարստահարությունների դեմ ուղղված պատասխաններ էին: Հայ գյուղացիական զանգվածները զենքի էին դիմել՝ իրենց կյանքը, գույքը և պատիվը փրկելու համար: Այդ ամենի հիման վրա Մկրտիչ Ներսիսյանը ցույց է տալիս, որ թուրքական վայ-պատմաբանների պնդումները, թե Օսմանյան կայսրության մեջ հայերը հիմք չեն ունեցել ապստամբելու, ստահոդ են ու հիմնազուրկ:

Գրքում լուսաբանված են այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների պատմությունը, արևմտահայերի 1915 - 1916թթ. ցեղասպանության հարցերը և պատմագիտական այլ խնդիրներ:

Հրատապ նշանակություն ունեն գիտական հաղորդումները Հայկական Հարցի վերաբերյալ: Մասնավորապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում Խրիմյան Հայրիկի դիմումը Նիկոլայ II-ին, 1920 - 1921թթ. Արևելյան Հայաստանում քեմալական զորքերի բարբարոսություններին առնչվող նյութերը Հայաստանում և այլն:

«Պատմության կեղծարարները» գիրքը հրապարակելուց հետո, 1998թ. հոկտեմբերի 7-ին պատմաբանը փայլուն ելույթ ունեցավ Հայկական Հարցի միջազգայնացման 120-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում, որը կազմակերպել էր Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարանը: «Հայկական Հարցի ծագումը և տերությունները» թեմայով զեկուցման մեջ Մ.Ներսիսյանը պատմագիտական տեսանկյունից մի անգամ ևս հստակեցրեց Հայկական Հարցի ծագումը սահմանումը և ամբողջ իմաստը: Գիտնականը նշեց, որ Հայկական Հարցի ծագման վերաբերյալ ինչպես հայ, այնպես էլ օտարերկրյա պատմագրության մեջ կան սխալ տեսակետներ: Մ.Ներսիսյանը մատնանշեց, որ «որոշ չփոթություն առաջացել է նրանից, որ Հովհ. Թումանյանը, Լեոն և ուրիշ հեղինակություններ երբեմն Հայկական Հարց ասելով նկատի են ունեցել հայ ժողովրդի ծանր վիճակի, ճակատագրի հարցն ընդհանրապես: Լեոն, օրինակ, գրել է, թե Հայկական Հարցն այնքան հին է, որքան ինքը՝ հայ ժողովուրդը: Սակայն նրանց համապատասխան գրվածքները ուշադրությամբ ընթերցելու դեպքում պարզ է դառնում, որ Լեոն և Թումանյանը նույնպես Հայկական Հարցը կապում են 1878թ. «Սան-Ստեֆանոյում և Բեռլինի կոնգրեսում բարձրացված Հարցի՝ Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրագործելու խնդրի հետ: Բայց չնայած այդ բոլորին, քիչ չեն այն հեղինակները, որոնք Հայկական Հարց են փնտրում հին և միջին դարերում կամ ավելի հաճախ՝ 1677 - 1678թթ.: Այս դեպքում խոսքը վերաբերում է Հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու քաղաքական գործունեությանը: Ի դեպ, հայտնվել է կարծիք նաև այն մասին, որ Հայկական Հարցը ծագել է Բաղրատունյաց թագավորության անկումից հետո» : Այնուհետև նա գիտականորեն բացահայտեց, Հայկական Հարցի ներքին բովանդակությունը: Դրա իմաստը թուրքական բռնակալությունից Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդիրն է:

Այս զեկուցման մեջ Մ.Ներսիսյանը հայտարարեց. «Որոշ հեղինակներ, չխորանալով գործի էության մեջ, հավատ ընծայեցին անգլիական այն գործիչներին, որոնք կեղծելով պատմական փաստերը, փորձում էին Հայկական կոտորածների մեղքը գցել Ռուսաստանի վրա»[19]:

---

[18] Պատմա-բանասիրական Հանդես, 1999, № 1, էջ 107:
[19] Նույն տեղում, էջ 104:

Այսպիսով, Հայկական հարցն ամբողջ էությամբ և բոլոր կողմերով հստակորեն ու գիտականորեն սահմանվել և հիմնավորվել է Մ.Ներսիսյանի աշխատություններում: Դրանով էլ նոր ավանդ է ներդրվել հայ պատմագիտության մեջ:

Անվանի պատմաբանի աշխատություններում կարևոր տեղ է գրավում հայերի ցեղասպանության համակողմանի ու գիտական լուսաբանումը: Նրա անմիջական նախաձեռնությամբ ու խմբագրությամբ 1966թ. լույս տեսավ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրության մեջ» փաստաթղթերի ու նյութերի հիմնարար ժողովածուն (ռուսերեն): 1982թ. իրականացվեց ռուսերեն երկրորդ հրատարակությունը, իսկ 1991թ.՝ հայերեն առաջին հրատարակությունը: Այդ մեծածավալ ուսումնասիրության մեջ ամփոփված են հայերի ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր ու նյութեր՝ հայկական, ռուսական, թուրքական, գերմանական, անգլիական, ֆրանսիական, ամերիկյան և այլ աղբյուրներից: Հատկապես արժեքավոր են ռուսական արխիվային փաստաթղթերն ու նյութերը, որոնց մեծ մասը գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ: Ժողովածուում հավաստի փաստաթղթերով, տարբեր պետությունների դեսպանների, հյուպատոսների, զանազան պաշտոնյաների զեկուցագրերով, ականատեսների վկայություններով լիովին հիմնավորված են ինչպես XIXդ. վերջին, այնպես էլ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայերի ցեղասպանության բոլոր հիմնական կողմերը: Հայերի ցեղասպանության մասին այդ ժողովածուն փաստական նյութի ընդգրկմամբ մինչև օրս էլ մնում է անգերազանցելի:

Դրանից հետո Մ.Ներսիսյանը հետևողականորեն շարունակեց հայերի ցեղասպանության հետագա տարիների (1918 - 1923թթ.) պատմության վերաբերյալ փաստաթղթերի ու նյութերի ուսումնասիրությունը: Նրա գլխավորած խմբի աշխատանքներն ավարտվել են, և նոր ժողովածուն գրեթե պատրաստ է հրապարակման:

35 տարի առաջ. հայերի ցեղասպանության պատմության կեղծարարների դեմ Մ.Ներսիսյանը կատարեց համարձակ, խիզախ քայլ: 1965թ. ապրիլին ամերիկյան «Թայմ» հանդեսը տպագրել էր գրախոսական՝ անգլիացի լորդ Կինրոսի «Աթաթուրք» խորագիրը կրող մեծածավալ գրքի մասին: Հրապարակման մեջ սխալ էր համարվում գրքում բերված այն տվյալը, թե 1922թ. սեպտեմբերին թուրքական իշխանությունների կողմից Զմյուռնիայում կոտորածների ժամանակ սպանվել էր 2000 հայ և հույն: «Թայմը» պնդում էր, որ Զմյուռնիայի ջարդերի հետևանքով զոհվել է 100.000 հայ և հույն, իսկ քաղաքում ավերիչ հրդեհը տեղի է ունեցել ոչ թե պատահաբար, այլ կազմակերպվել է թուրքական զինված ուժերի կողմից[20]: Նույն թվականի ապրիլի վերջին մոսկովյան "За рубежом" շաբաթաթերթը տպագրում է լրագրող Գ.Արիևիչի հոդվածը, որում նա, խեղաթյուրելով փաստերը, գրում է, որ «Զմյուռնիան հրդեհել են ոչ թե թուրքերը, այլ «ինտերվենտները» (այսինքն՝ անգլիացիները, հույները և հայերը), և որ Զմյուռնիայի սեպտեմբերյան անցքերը պետք է համարել ոչ թե «ամոթալի ջարդեր», ինչպես գրում է «Թայմը», այլ թուրքական «ազատագրական շարժման ավարտը»[21]: Մ.Գ.Ներսիսյանը նամակ է ուղարկում մոսկովյան

[20] Մ.Գ.Ներսիսյան. Պատմության կեղծարարները, էջ 116 - 117:
[21] Նույն տեղում, էջ 116 - 117:

շաբաթաթերթի խմբագրությանը, որում անարդանքի սյունին է դատում պատմության կեղծարարին: Ավելին, 1965թ. ապրիլի 24-ին «Պրավդա»-ում հրապարակվում է Մ.Ներսիսյանի և պրոֆեսոր Ն.Ուշակովի «Գենոցիդը ամենածանր հանցագործությունն է մարդկության հանդեպ» հոդվածը, որտեղ ուղղակի գրված է. «Հիսուն տարի առաջ երիտթուրքերի կառավարությունը բնաջնջեց մոտավորապես մեկ ու կես միլիոն հայ» [22]:

Ինչպես ժողովածուի մեջ, այնպես էլ մի շարք հրապարակումներում, Մ.Ներսիսյանը հիմնավորում է այն հայեցակետը, որ հայերի ցեղասպանությունը, որպես պետականորեն մշակված ծրագիր, սկսվել և իրականացվել է XIXդ. վերջերից՝ Արդուլ Համիդ II-ի կառավարության ժամանակ, բարբարոսաբար իրագործվել է երիտթուրքերի պարագլուխների կողմից՝ Առաջին աշխարհամարտի ամբողջ ընթացքում և շարունակվել է քեմալականների կողմից՝ մինչև 1920-ական թվականների սկզբները: Այս դիտական հայեցակետով ցեղասպանության ամբողջ ժամանակահատվածը զուգակցվում է թե՛ արևմտահայության, թե՛ արևելահայության գոյամարտերով: Այդ հերոսամարտերով լիովին հաստատվում է հայության գոյատևության, ազատության և անկախության աննկուն ոգին:

Ցեղասպանության վերաբերյալ իր ուսումնասիրություններում Մ.Ներսիսյանը այն ընդհանրացումն է կատարել, որ «Հայ ժողովրդի բազմադարյան տարեգրությունը ունի ոչ քիչ արյունոտ էջեր, բայց այն, ինչ տեղի ունեցավ արևմտահայության հետ 20-րդ դարի սկզբին, մի ահավոր աղետ էր, իսկական ցեղասպանություն, որն իր ծավալով ու դաժանությամբ աննախադեպ էր մարդկության պատմության մեջ» [23]:

Բնութագրելով հայերի ցեղասպանության պատմությունը՝ նա նշել է, որ զանգվածային կոտորածները սկսվել են դեռևս 1914թ. ամռանը, երբ նոր էր բռնկվել Առաջին համաշխարհային պատերազմը: Միաժամանակ թուրքական բանակ զորակոչվեցին երիտասարդ հայերը, որոնց, սակայն, շուտով զինաթափեցին և ոչնչացրեցին նենգաբար: 1915թ. ապրիլին երիտթուրքական իշխանությունները Կոստանդնուպոլսում և մյուս քաղաքներում բանտարկեցին և ապա աքսորեցին ու դաժանորեն սպանեցին հարյուրավոր անվանի գրողների, հրապարակախոսների, հայ մշակույթի ներկայացուցիչների:

Մ.Ներսիսյանը ցույց տվեց, որ որպես հայերի ցեղասպանության հերթական քայլ, 1915թ. մայիսից երիտթուրքերը անցան խաղաղ ու անօգնական բնակչության զանգվածային ջարդերին՝ դրանք իրականացնելով հիմնականում տեղահանությունների միջոցով: Նա գրում է, որ դա «խաբեություն էր, քանի որ իրականում կազմակերպվեց ոչ թե դաղթ, տեղահանություն, այլ զանգվածային կոտորած: Եվ իսկապես, շուտով սկսվեց կանանց, երեխաների ու ծերունիների ոչնչացում: Բնակչության մեծ մասը կոտորվեց Հայրենի գյուղերում ու քաղաքներում, կամ անհայտ հեռուները տանող երկարաձիգ ճանապարհներին, մնացածը՝ Միջագետքի ու Սիրիայի անապատներում» [24].

---

[22] Պրավդա, 24. IV, 1965.

[23] Մ.Գ.Ներսիսյան, Քսաներորդ դարի առաջին ցեղասպանությունը, Գիտություն, 1996, ապրիլ, № 7:

[24] Նույն տեղում:

Մանրակրկիտ ուսումնասիրելով Հայերի ցեղասպանության հետ կապված հարցերը՝ Մ.Ներսիսյանը այն հետևությունն է անում, որ կոտորածը համընդհանուր էր, ավերն ու թալանը՝ նույնպես: Օսմանյան կայսրության սահմաններում գտնվող գրեթե ոչ մի հայկական գյուղ կամ դավառ զերծ չմնաց ահռելի ջարդերից ու կողոպուտից:

Հայերի ցեղասպանության բացահայտման և միջազգային ճանաչման հարցում Մ.Ներսիսյանը կարևոր հիմքեր է համարում երեք խոշոր դատավարությունները: Առաջինն այն էր, որ 1919թ. Կոստանդնուպոլսում թուրքական նոր կառավարության կողմից ստեղծված ռազմական դատարանը, հաստատելով երիտթուրքերի հանցագործությունները, մահվան դատապարտեց մի շարք ոճրագործների, որոնց թվում և Թալեաթ, Էնվեր ու Ջեմալ փաշաներին: Երկրորդ դատավարությունը տեղի ունեցավ 1921թ. Բեռլինում: Այդ դատավարության միջոցով լիովին հաստատվեց, որ երիտթուրքերն իրենց պանթուրքիստական ծրագրերն իրականացնելու նպատակով կազմակերպեցին հայերի ցեղասպանությունը, և որ կատարված անօրինակ ոճրագործությունների գլխավոր հեղինակը ներքին գործերի նախարար Մեհմեդ Թալեաթն էր: Ելնելով դրանից՝ դատարանը իրավացիորեն արդարացրեց Սողոմոն Թեհլիրյանին: Երրորդ դատավարությունը տեղի ունեցավ 1984թ. ապրիլի 13 - 16-ին, Փարիզում: Ժողովուրդների մնայուն ատյան կոչվող այդ դատարանը անվերապահորեն ընդունեց հայերի ցեղասպանության փաստը և պահանջեց, որ այն ճանաչվի բոլոր պետությունների կողմից:

Հիշարժան է, որ երբ 1995թ. ապրիլի 21 - 23-ը Երևանում Հայոց Մեծ եղեռնի 80-ամյակի կապակցությամբ տեղի ունեցավ միջազգային գիտաժողով, Մ.Ներսիսյանի բովանդակալից զեկուցումը լսվեց մեծ ուշադրությամբ և արժանացավ բարձր գնահատականի: Հայերի ցեղասպանության 80-ամյակի առթիվ գրած «Հայ ժողովրդի մեծ ողբերգությունը» հոդվածում նա նշում է, «ութ տասնամյակ է անցել արևմտահայության 1915թ. ցեղասպանությունից: Տեղի են ունեցել խոշոր իրադարձություններ, կատարվել են շատ փոփոխություններ, սակայն մեր ժողովուրդը միշտ էլ իր բարոյական պարտքն է համարել չմոռանալ ու պատշաճ հարգանքով նշել մեկուկես միլիոն անմեղ զոհերի հիշատակը: Բայց խոսել անցյալի մասին, նշանակում է խոսել նաև մեր ներկայի ու ապագայի մասին, նշանակում է լինել զգոն ու սթափ, հաշվի առնել պատմության դասերը, որպեսզի խույս տանք նոր կոտորածներից ու ողբերգություններից: Դրա անհրաժեշտությունը զգացվում է հատկապես այսօր, երբ ժամանակակից պանթուրքիստական ուժերը և նրանց թիկունքում կանգնած պետությունները բացահայտ աշխուժություն են ցուցաբերում Անդրկովկասի և ընդհանրապես ամբողջ Կովկասի նկատմամբ: Անշուշտ, պատահական չէ այն, որ առաջ են քաշվում «Կովկասյան տուն», «Կովկասյան դաշնություն» ստեղծելու ծրագրերը, ծրագրեր, որոնց իրականացումը մեր բազմաչարչար ժողովրդին կարող է բերել նոր աղետ, նոր ցեղասպանություն: Իհարկե, չպետք է մոռացության տրվի նաև այն իրողությունը, որ արևմտյան տերությունները, հակառակ իրենց շատ խոստումներին, գործնականում ոչ մի օգնություն ցույց չտվեցին 1918 - 1920-ական թթ. խիստ ծանր վիճակում գտնված Հայ ժողովրդին:

Արդյո՞ք այդ չի կրկնվի նաև մեր ժամանակում... Չպետք է անտեսել պատմության դասերը, մեր հեռատես նախնիների պատգամները»[25]:

Մ.Գ.Ներսիսյանը միանգամայն տեղին ընդգծել է Վիլյամ Սարոյանի խոսքերը. «Մեզ համար մեծ բախտ է, որ մեզ զորավիդ է ռուս ժողովուրդը: Մենք չենք կարող գոյատևել առանց զորավոր պաշտպանության... Ռուսները մեր եղբայրներն են, մեր բարեկամները»[26]: Անվանի պատմաբանը, մեր բարդ ու դժվարին ժամանակներում հավատարիմ մնալով իր ազգի փրկության հավատամքին, խարազանել է այսպես կոչված «երրորդ ուժի» բայառման տիրահռչակ «տեսությունը»: Միանգամայն համամիտ լինելով նրա իրատեսական մտածողությանը՝ հարկ ենք համարում բերել նրա հստակ ու պատմականորեն լիովին հաստատված տեսակետը. «Մեր դիպլոմատներից մի քանիսը խստորեն քննադատում են հայ քաղաքական գործիչներին այն բանում, որ նրանք փորձելով ազատվել օտարների տիրապետությունից, չեն հենվել սեփական ուժի վրա, այլ դիմել են «երրորդ ուժի» օգնությանը: Այս կարծիքն ունեցողները պարզապես մոռանում են, չեն գիտակցում այն կարևոր հանգամանքը, որ հայ ժողովուրդը, ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Հայաստանում, ապրում էր մեծ մասամբ թվական գերակշռություն ունեցող մահմեդական բնակչության մեջ, չէր կազմում միաձույլ ու հզոր հավաքական ուժ, ուստի ի վիճակի չէր սեփական ուժերով, առանց օգնության թոթափել դեռևս բավական ուժեղ բռնապետությունների ծանր լուծը: Այսպիսով, անցյալի մեր գործիչներն այս հարցում ևս ավելի իրատես մարդիկ էին, քան մակերեսային մտածողություն ունեցող այսօրվա ուռա հայրենասերները»[27]:

Կարևոր է նաև Մ.Ներսիսյանի պատմագիտական այն հայեցակետը, որ Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանությունը օրգանապես շաղկապվում է ինքնապաշտպանական պայքարի, գոյամարտերի, հերոսամարտերի հետ: Դա Հայկական հարցի գիտական լուսաբանման ճշմարիտ մոտեցում է:

1965թ., Հայոց ցեղասպանության հիսնամյակին Մ.Ներսիսյանը հրապարակում է արժեքավոր հոդված զորավար Անդրանիկի լեգենդար ու հերոսական գործունեության մասին: «Ժողովրդական հերոսը» վերնագրով այդ հրապարակման մեջ, նա Հայաստանում առաջին անգամ, համակողմանիորեն բնութագրեց մեծ հայրենասերի, տաղանդավոր զորահրամանատարի փայլուն կերպարը: «Հայ ժողովրդի ազգային հերոսը, – գրում է գիտնական պատմաբանը, – շուրջ 30 տարի շարունակ մարտնչել է սուլթանական արյունոտ բռնակալության դեմ, կազմակերպել և ղեկավարել է արևմտահայ գյուղացիության ինքնապաշտպանական-ազատագրական կռիվները՝ միշտ հանդես բերելով անօրինակ խիզախություն և հնարամտություն»[28]: Մեծ զորավարի պաշտպանական հերոսամարտերը արժանավայել պատասխան էին սկզբում համիդականների, այնուհետև երիտթուրքերի պարագլուխների հայաջինջ քաղաքականությանն ու գործողություններին:

Մ.Գ.Ներսիսյանը Հայկական հարցի արդարացի լուծումը, Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման խնդիրները սերտորեն կապում

---

[25] Մ.Գ.Ներսիսյան, Պատմության կեղծարարները, էջ 114 – 115:
[26] Նույն տեղում:
[27] Նույն տեղում, էջ 97:
[28] Սովետական Հայաստան, 25. II, 1965:

*էր համայն հայության միասնական պայքարի հետ: Դրա հետ միաժամանակ, այդ խնդիրների լուծման գործում վճռորոշ տեղ էր հատկացվում ռուսաստանյան գործոնին, հայ-ռուսական դարավոր բարեկամության ու փոխադարձ օգնության ամրապնդմանը:*

## ОСВЕЩЕНИЕ АРМЯНСКОГО ВОПРОСА И ГЕНОЦИДА АРМЯН В ТРУДАХ М.Г.НЕРСИСЯНА

С.С.СТЕПАНЯН

Резюме

Основные проблемы Армянского вопроса и геноцида армян разработаны в трудах М.Г.Нерсисяна. В 1955г. он издал объемную монографию "Освободительная борьба армянского народа против турецкого деспотизма 1850 – 1870гг.", в которой был рассмотрен комплекс проблем, относящихся к национальной борьбе западных армян, создавшей предпосылки формирования Армянского вопроса.

В последующих работах М.Г.Нерсисян научно обосновал и четко характеризовал суть Армянского вопроса как предмета международной дипломатии.

В 1966г. под редакцией М.Г.Нерсисяна вышел сборник документов и материалов "Геноцид армян в Османской империи", который явился первой в армянской историографии научной публикацией документов, освещающих историю геноцида армян в период правления Абдула Гамида II и при младотурках. Проблемам Армянского вопроса посвящены многочисленные статьи, подборки документов и материалов, в частности книга "Фальсификаторы истории (статьи и сообщения)", которая вышла в свет в 1998г.

М.Г.Нерсисян внес большой вклад в научную разработку истории Армянского вопроса и геноцида армян.